ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. մայիսի 13-ից 15-ը Օստրավա (Չեխիայի Հանրապետություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի տեղակալ պարոն Խաչիկ Հակոբյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Խաչիկ Հակոբյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Օստրավա (Չեխիայի Հանրապետություն)

   2017թ. մայիսի 13-ից 15-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպական տարածաշրջանային գրասենյակ, ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողով, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի գրասենյակ և Չեխիայի բնապահպանության և առողջապահության նախարարություններ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Շրջակա միջավայրի և առողջապահական հարցերին նվիրված 6-րդ նախարարական կոնֆերանսին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Կոնֆերանսի ընթացքում անդրադարձ կատարվեց ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և աշխարհաքաղաքական իրավիճակի ուսումնասիրություններին, քննարկվեցին շրջակա միջավայրի պաշտպանության և առողջապահության հիմնախնդիրների առաջնայնություններն, ինչպես նաև անդամ պետություններին և շահագրգիռ

կողմերին՝ «Շրջակա միջավայրը և առողջությունը» եվրոպական գործընթացին ներգրավելու հնարավորությունները:

Կոնֆերանսը նաև հարթակ էր ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և «Առողջություն 2020» գործընթացների շրջանակներում ձեռք բերված հանձնառությունների կատարման համար:

7. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

2017թ. մայիսի 13-ից 15-ը Օստրավայում (Չեխիայի Հանրապետություն) կայացած կոնֆերանսի ավարտին տեղի ունեցավ նախարարական հռչակագրի ընդունում:

Չեխիայի Հանրապետություն այցի շրջանակներում նաև ստորագրվել է Համագործակցության հուշագիր Չեխիայի Հանրապետության բնության պահպանության գործակալության և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալության միջև տեղեկատվության և փորձի փոխանակման վերաբերյալ:

ՀՀ բնապահպանության

նախարարի տեղակալ՝

Խ.Հակոբյան